ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 923 - Ա

ՀԱՅԿ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 29-րդ հոդվածով և հիմք ընդունելով կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշումը՝

1. Վարչապետի աշխատակազմի դիմումների քննարկման, քաղաքացիների հետ հետադարձ կապի մշտադիտարկման և գնահատման վարչության (այսուհետ՝ վարչություն) դիմումների քննարկման բաժնի պետ Հայկ Սիմոնյանին 2026 թվականի հոկտեմբերի 2-10-ը ներառյալ գործուղել Սինգապուրի Հանրապետություն (Սինգապուր)՝ Սինգապուրի Հանրապետության կառավարության վերապատրաստման համագործակցության ծրագրի կողմից կազմակերպվող «Citizen-Centric Digital Government Transformation» խորագրով դասընթացին մասնակցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ սահմանված կարգով ապահովել Հայկ Սիմոնյանի գործուղման ճանապարհածախսի, 2026 թվականի հոկտեմբերի 2-4-ն ընկած ժամանակահատվածի համար օրապահիկի (հոկտեմբերի 2-ին տարանցիկ վայր՝ Դուբայ) և գիշերավարձի (հոկտեմբերի 3-4-ն ընկած ժամանակահատվածի համար) հետ կապված ծախսերի հատուցումը:

3. Վարչության դիմումների քննարկման բաժնի պետին՝ գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

4. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված մյուս ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ